Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ՝ ԱՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ, ԵՐՈՒՍԱՂԵՄ ՄԵԿՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ

(14 հունվարի 2000 թ.)

Սիրելի հոգևոր եղբայրներ, սիրելի սաներ.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Իշման Սուրբ Սեղանի առջև, ուխտս կատարած ահա Տիրոջ կամոք մեկնում եմ Սուրբ Երկիր՝ նախագահելու Սուրբ Ծննդյան արարողությունները, որ տոնախմբվելու են հին տոմարով հունվար 18 և 19-ին: Մեկնում եմ հրավերքով Երուսաղեմի Հայոց Պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի: Գոհություն եմ վերառաքում առ Աստված, որ հայրապետական մեր առաջին ուղևորությունը ուխտագնացության ճամփորդություն է ի Սուրբ Երկիր, ի մասնավորի՝ դարակազմիկ 2000 թվականին և մեր Եկեղեցու 1700-ամյակի նախաշեմին: Այնտեղ Սուրբ Ծննդյան տոնական արարողություններին մասնակցություն են բերելու ՀՀ նախագահը, Պոլսո Պատրիարքը, ներկայացուցիչներ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից, մեր Եկեղեցու բարձաստիճան հոգևորականներ և մեծ թվով հավատացյալներ Միացյալ Նահանգներից, Պոլսից և աշխարհի տարբեր երկրներից: Մեկնում եմ հանգիստ սրտով, մեկնում եմ հավատքով, որ Աստուծո բարի հայացքի տակ մեր ժողովուրդն այստեղ՝ Մայր Հայրենիքում պիտի ապրի անվրդով ու խաղաղ: Մեկնում եմ՝ հոգուս մեջ ծրարած Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության, ձեր աղոթքները, մեր ժողովրդի դարավոր իղձերն ու երազները դնելու համար Տիրոջ Սուրբ Սեղանի առջև և հայցելու, որ Աստված ունկնդիր լինի Հայրապետի մեր խնդրանքին և պարգևի ժողովրդին հայոց երջանիկ, բարօր, ապահով ու անվրդով կյանք: Մեր աղոթքը պիտի լինի Սուրբ Ծննդյան այրում, Տիրոջ Սուրբ Գերեզմանի առջև, որպեսզի Տերն անսասան պահի Հայրապետությունը հայոց, Հայ Եկեղեցու նվիրապետության Աթոռները, զինվորյալ միաբանությամբ մեր ժողովրդին ի Հայաստան, հԱրցախ և ի Սփյուռս և Հանրապետությունը Հայաստան և Արցախ աշխարհների:

Մեր աղոթքը պիտի լինի նաև, որ Աստված անշեղ պահի մեր ընթացքը որպես Եկեղեցի, որպես քրիստոնյա ժողովուրդ 1700 տարիների սրբազան իր ժառանգությունների ու ավանդության ծիրի մեջ: Թող Աստված սիրո և միաբանության մեջ պահի նաև մեր Սուրբ Աթոռը, ձեզ ամենքիդ՝ կատարելու ձեր ծառայությունը՝ ի պայծառություն և ի շինություն մեր Եկեղեցու, հուրախություն մեր բարեպաշտ ժողովրդի:

Մնացեք խաղաղությամբ: Ձեր աղոթքներում առավոտյան և երեկոյան հիշեցեք նաև ինձ, ես էլ իմ աղոթներն առ Աստված վերառաքելիս՝ աղոթելու եմ ձեզ համար, մեր Եկեղեցու համար: Թող Աստված օրհնի մեզ ամենքիս և մեր ընթացքն առաջնորդի բարի ուղիով: